Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի
ավագանու՝ թ. N -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

N	Անվանումը	Ծառայության վճարների չափը (դրամ)
1.	***Դաշնամուր և այլ նվագարաններ***	
1)	դաշնամուր	6000
2)	կիթառ	3000
3)	իոնիկա	3000
4)	ակորդեոն	3000
5)	վոկալ	3000
2.	***Ազգային նվագարաններ***	
1)	դուդուկ	3000
2)	քանոն	3000
3)	դհոլ	3000
3.	***Լարային նվագարաններ***	
1)	ջութակ	3000
4.	***Փողային նվագարաններ***	
1)	սաքսոֆոն	3000
2)	կլարնետ	3000
3)	ֆլեյտա	3000
5.	***Երկրորդ գործիք***	***1500***

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի
ավագանու՝ թ. N -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /ՀՈԱԿ/ կողմից մատուցվող ծառայությունների վճարների չափը 2025 թվականի համար սահմանել 0 դրամ:
2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /ՀՈԱԿ/ կողմից մատուցվող ծառայությունների վճարների չափը բոլոր խմբերում 2025 թվականի համար սահմանել 500 դրամ:
3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /ՀՈԱԿ/ կողմից մատուցվող ծառայությունների վճարների չափը բոլոր բաժիններում 2025թվականի համար սահմանել 0 դրամ:
4. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /ՀՈԱԿ/ կողմից մատուցվող ծառայությունների վճարների չափը 2025 թվականի համար բոլոր խմբերում՝ 0 դրամ:
5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում /ՆՈՒՀ-եր/ ծնողական վարձավճարների չափը 2025թվականի համար սահմանել 0 դրամ:
6. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի դահլիճը և նախասրահը մշակութային, մարզական և այլ միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով տրամադրելու համար՝ 1 ժամվա վճար սահմանել 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի
ավագանու՝ թ. N -Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից համայնքի գերեզմանատների պահպանման և սպասարկման ծառայության վճարը՝ յուրաքանչյուր հուղարկավորության համար սահմանել՝ 0 դրամ:
2. Բազմահարկ շենքերի վերելակների սպասարկման ամսական վճարի չափը 2025 թվականի համար սահմանել՝

N	Շենքերի հարկերի և բնակարանների թիվը	Ամսական վճարի չափը (դրամ)
1.	6 հարկանի շենք, հարթակում՝ 4 բնակարան	6.000 դրամ
2.	9 հարկանի շենք, հարթակում՝ 4 բնակարան	10.000 դրամ